ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հունիսի 2011թ. **N --- - Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 235,583.7 հազար դրամ, որից.

1) 35,000.0 հազար դրամ՝ Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի 27/8 հասցեում կառուցվող հեծանվահրապարակի հեղեղատար կոյուղու կառուցման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածով,

2) 110,000.0 հազար դրամ՝ Երևան քաղաքում կանաչ տարածքների խնամքը պատշաճ մակարդակով իրականացնելու նպատակով թվով 1000 հատ խոտհնձիչ մեքենաներ և սարքավորումներ ձեռքբերելու համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով,

3) 37,000.0 հազար դրամ՝ «Մատենադարան» հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի նորակառույց շենքին հարող տարածքի կանաչապատման աշխատանքների համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով,

4) 53,583.7 հազար դրամ՝ Հանրապետության հրապարակում տոնական միջոցառումների անխափան էլեկտրամատակարարման իրականացման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով:

2. Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 87,000.0 հազ. դրամ, որից.

1) 47,000.0 հազար դրամ՝ Երևան քաղաքում կանաչ տարածքների հիմնման նպատակով մշտադալար տնկիների ձեռքբերման համար բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով,

2) 40,000.0 հազար դրամ՝ «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ–ին պահեստամասերի ձեռքբերման նպատակով օժանդակություն տրամադրելու համար բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է.

1. Երևանի քաղաքապետարանի և «Ռենկո» ՓԲԸ–ի միջև 10.02.2009թ. կնքված ներդրումային ծրագրի համաձայնագրի 2.12 կետի կետի պահանջների համաձայն Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի 27/8 հասցեում կառուցվող հեծանվահրապարակի շինարարությանը խանգարող բոլոր գործող ինժեներական կոմունիկացիաների վերատեղադրման և համալիրին հատկացված հողատարածքից դուրս հետագա շահագործման համար անհրաժեշտ բոլոր ինժեներական ցանցերի կառուցման աշխատանքները պետք է իրականացվեն Երևան համայնքի կողմից։ Հեծանվահրապարակի ներկայումս գործող միջին ճնշման գազատարի տեղափոխման և օբյեկտի գազամատակարարման, ինչպես նաև էլեկտրասնուցման աշխատանքների իրականացման համար մշակվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր, համաձայն որոնց աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 42,648.0 հազար դրամ, ինչն էլ առաջարկվել է հատկացնել «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով։ Միաժամանակ, բացի վերը նշվածից, անհրաժեշտություն է առաջացել իրականացնել համալիրի հեղեղատար կոյուղու շինարարական աշխատանքները, որոնց մոտավոր նախահաշվային արժեքը կազմում է 35,000.0 հազար դրամ, որն էլ նախատեսվում է հատկացնել սույն որոշման նախագծով,

2. Երևան քաղաքում կանաչ տարածքների խնամքը պատշաճ մակարդակով իրականացնելու և ժամանակակից պահանջներին համապատասխան կազմակերպելու նպատակով նախատեսվում է թվով 1000 հատ խոտհնձիչ մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերել նախադպրոցական, կրթական և այլ հաստատություններին, ինչպես նաև համատիրություններին տրամադրելու համար, ինչի համար սույն որոշման նախագծով առաջարկվում է հատկացնել 110,000.0 հազար դրամ,

3. Երևան քաղաքում իրականացվող կանաչապատման լայնածավալ աշխատանքների շրջանակներում նպատակահարմար է համարվել իրականացնել նաև

«Մատենադարան» հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի նորակառույց շենքին հարող տարածքի կանաչապատման աշխատանքները, ինչի նպատակով նախապատրաստվել են կանաչապատման էսքիզային տարբերակը և համապատասխան նախահաշվային փաստաթղթերը, ինչն էլ հաշվի առնելով նախատեսվում է սույն որոշման նախագծով հատկացնել 37,000.0 հազար դրամ,

4. Հանրապետության հրապարակում իրականացվող տոնական միջոցառումների ժամանակ պարբերաբար խնդիրներ են առաջանում տեղադրվող սարքավորումների համար անհրաժեշտ անխափան և անվտանգ էլեկտրամատակարարման հետ, ինչով պայմանավորված մշակվել են նոր էլեկտրամատակարարման նախագծանախահաշվային փաստաթղթերը, որի իրականացման համար անհրաժեշտ նախահաշվային 53,583.7 հազար դրամը նախատեսվում է հատկացնել սույն որոշման նախագծով։

5. Միաժամանակ, կանաչապատման լայնամասշտաբ աշխատանքների իրականացման շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել լրացուցիչ մշտադալար տնկիներ՝ նոր կանաչ տարածքների հիմնման համար, ինչի համար որոշման նախագծով առաջարկվում է հատկացնել 47,000.0 հազար դրամ։

6. Սույն որոշման նախագծով նախատեսվում է նաև որպես դրամաշնորհ 40,000.0 հազար դրամ հատկացնել «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին ֆիզիկապես մաշված տրոլեյբուսների շահագործման ժամկետը երկարացնելու նպատակով պահեստամասերի ձեռքբերման համար։

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացնել ընդհանուր թվով 235,583.7 հազար դրամ, իսկ վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 87,000.0 հազար դրամ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ